

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԲՔՍԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՖՐՈՒՆԶԵԻ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ 00.01 - Մանկավարժության տեսություն և պատմություն
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր **Ա. Օ. Թփուլյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր **Ա. Վ. Աբրահամյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու **Գ. Հ. Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. նոյեմբերի 30-ին, ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թվականի հոկտեմբերի 29-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Ժամանակակից հարափոփոխ աշխարհում կատարվող ցանկացած իրադարձություն ալիքի պես փոխանցվում է աշխարհի մի ծայրից մյուսը՝ տնտեսական, ժողովրդագրական և մշակութային կառուցվածքներ փոփոխելով: Սոցիոմշակութային իրադրությունը բնութագրվում է ժողովրդավարական վերափոխումներով, բռնապետական ռեժիմների կործանմամբ և միջազգային քաղաքականության մեջ դրական փոփոխությունների միտումով: Մինչդեռ այս ամենին զուգահեռ մարդկությունը գրեթե ամեն օր բախվում է մարդու իրավունքներին և ազատություններին սպառնացող այնպիսի իրական վտանգների հետ ինչպիսիք են՝ ծայրահեղականությունը, քսենոֆոբիայի սրացումը, միջազգային ահաբեկչությունը, բռնությունը, ազգային-էթնիկ և դավանանքի տարբերության հետևանքով ծագած բախումները և պատերազմները:

Մեր վերափոխվող կյանքի ուղեկիցներն են դարձել վախը, անվստահությունը, աղքատությունը, բռնությունը, քաղաքական և տնտեսական ձգնաժամերը և շրջակա միջավայրի օրեցօր ահագնացող խնդիրները:

Այս ամենից զատ համաշխարհայնացման արդյունքում աշխարհում ընթացող ինտեգրման գործընթացները հանգեցնում են տարբեր երկրների և մշակույթների շփումների ինտենսիվացման: Մարդկանց միգրացիայի հետևանքով շատ միամշակույթ երկրներ դառնում են բազմամշակույթ, որոնց ներդաշնակ զարգացումը հնարավոր է միայն հավասարության, մարդու իրավունքների և մշակութային տարբերությունների հանդեպ հարգանքի մթնոլորտում:

Այս համերկրային խնդիրների սրությունը՝ որպես անհետաձգելի հրամայական, առաջ է քաշում ժամանակակից աշխարհի ամբողջականության և բազմազանության պահպանման անհրաժեշտությունը:

Հանդուրժողականությունը այս իրավիճակում հանդիսանում է մարդկության գոյատևման անհրաժեշտ պայման, և ոչ միայն մարդկության՝ այլև ողջ մոլորակի:

Ակնհայտ է դարձել, որ անհանդուրժողականությամբ հրահրվող միջխմբային առձակատումների մեծ մասը ծագում է ժողովուրդների՝ իրենց քաղաքական, սոցիալական և տնտեսական խնդիրները տնօրինելու իրավունքից օգտվելու վճռականությունից: Ինչպես մատնանշում է ՄԱԿ-ի <<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը>>՝ <<մարդու իրավունքների անտեսումն ու դրանց նկատմամբ արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի և

համոզմունքի ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից>>¹: Այսինքն՝ բռնությունը կարող է ժողովրդավարական իղծերի բռնաճնշման, ինչպես և անհանդուրժողականության հետևանք լինել:

Ժողովրդավարության հիմնական գործառույթներից մեկը քաղաքական փոփոխություններին նպաստելն է և քաղաքական տարբերություններն առանց բռնության հարթելու հնարավորություն ընձեռելը: Այսպիսով՝ ժողովրդավարությունը անքակտելիորեն կապված է խաղաղության, մարդու իրավունքների և հանդուրժողականության հետ: Համաշխարհային հանրության համար այս չորս արժեքների ձեռքբերումը հիմք կհանդիսանա խաղաղության մշակույթի և հանդուրժողականության ձևավորման համար: Յուրաքանչյուր մշակույթ իր հիմքում ուսուցման և դաստիարակության արդյունք է: Խաղաղության մշակույթը պահանջում է այնպիսի կրթություն, որը ծրագրված կլինի և կառաջնորդվի խաղաղության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և, իր հիմքը հանդիսացող՝ հանդուրժողականության արժեքներով:

Արդի առաջադեմ մտածողները հանդուրժողականությունը համարում են տարբեր ազգերի, մշակույթների և դավանանքի մարդկանց հաղորդակցման անհրաժեշտ պայման: Այս մոտեցումից է բխում նաև այն, որ հանդուրժող դիրքորոշումը և վարքը ոչ միայն ժամանակակից բազմազգ հասարակության նպաստավոր զարգացման պայման են, այլև սոցիալական պատվեր՝ կրթական համակարգին:

Հանդուրժողականությունը տարբեր դրսևորումներ ունի. անձնական, հասարակական՝ որն արտացոլվում է բարոյականության, բարքերի, էթիկայի, հասարակական հոգեբանության և գիտակցության մեջ, պետական՝ որն ամփոփվում է օրենսդրության և քաղաքական գործունեության մեջ: Հանդուրժող մշակույթի հիմնական պահանջը յուրաքանչյուր քաղաքացու կամ սոցիալական խմբի դավանանքի ազատ ընտրության հնարավորությունն է, հասարակության կողմից բարոյական, սոցիալ-քաղաքական, աշխարհայացքային ընկալումների ազատ ընտրությունը, որոնք ենթադրում են հանդուրժող, ոչ թշնամական, հարգալից վերաբերմունք ուրիշների ազատ ընտրության հանդեպ: Չափազանց կարևոր է նաև հանդուրժողականության սահմանների ընկալումը՝ գիտակցումը, որ հանդուրժողականությունը ամենաթողություն չէ, այն կարգավորվում է օրենքներով, իրավական նորմերով, երբեմն նաև մշակութային ավանդույթներով:

Այսօր հանդուրժողականության ձևավորման անհրաժեշտությունը կարևորված է մանկավարժական տեսությունների մեջ, սակայն այդ անձնային որակի ձևավորման, բարոյական արժեքի դաստիարակության մեխանիզմները դեռևս բավարար չեն մշակված կրթական ծրագրերում, դաստիարակության և

¹ Մարդու իրավունքներ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի, Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ, <<Տիգրան Մեծ>> հրատ., Երևան 2009թ. էջ 45

ուսուցման գործընթացներում: Ուստի ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկը հանդուրժողականության դաստիարակության հիմնախնդիրն է:

ԹԵՄԱՅԻ ՌԻՍԻՆԱՍԻՐՎՈՒԹՅԱՆ ԱՍԻՃԱՆԸ

Սույն ուսումնասիրության համար սկզբնաղբյուրներ են հանդիսացել արևմտյան և հայրենական փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական մի շարք տեսություններ և հեղինակներ, որոնք անդրադարձել են հանդուրժողականության երևույթին: Պատմափիլիսոփայական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երևույթը բավական խոր արմատներ ունի՝ սկսած անտիկ ժամանակներից (Պլատոն, Սոկրատես, Արիստոտել, Պլուտարքոս):

Հանդուրժողականությանը փիլիսոփայական տեսանկյունից առավել մանրակրկիտ անդրադարձել են է. Ռոտերդամցին, Ջ. Լոկկը, Ֆ. Վոլտերը, Ի.Կանտը, Մ. Բախտինը, Յու. Հաբերմասը, Ժ. Ղերիդան, Տ. Ադորնոն, Վ. Ամուսը, Մ. Հորկհայմերը, Լ. Տոլստոյը, Գ. Նարեկացին, Ղ.Անհաղթը, Գ. Գյուրջիեվը՝ դիտարկելով այն որպես քաղաքակիրթ փոխզիջման հնարավորություն բազմամշակույթ և բազմադավան աշխարհում:

Հանդուրժողականությունը՝ որպես առաքինություն, բարոյական դաստիարակության կարևոր բաղադրիչ, որպես անձի ինքնության, ինքնագիտակցման ձևավորման արդյունք լուսաբանվել է արևմտյան և հայ հումանիստ մանկավարժների աշխատություններում (Է. Ռոտերդամցի, Ա. Բինե, Ռ. Շտայներ, Յ. Կորչակ, Ս. Ֆրենե, Ջ. Ռոդարի, Կ. Ռոջերս, Մ. Ռոկիչ, Է. Ֆրոմմ, Ա. Հյուգենբյուլ-Կրեյգ, Շ. Ամոնաշվիլի, Ռ. Ռոզովա, Վ. Յադով, Յ. Հինդլյան, Խ. Աբովյան, Ղ. Ալիշան, Րաֆֆի և այլն):

Հանդուրժողականության դաստիարակության ձևավորման հարցում ուսուցչի անձի և մանկավարժական հմտությունների կարևորությունը լուսաբանել են Ա. Բինեն, Ս. Ֆրենեն, Հ. Գինոն, Շ. Ամոնաշվիլին, Յու. Շչերբինան, Տ. Ջագորույան, Լ. Միտինան, Վ. Սոնինը, Յու. Յանտովսկայան, Յ. Հինդլյանը, Ա. Բահաթրյանը, Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Ղ. Ալիշանը, Րաֆֆին և այլ:

Հասկացության իրավական կողմին անդրադարձել են Ջ. Լոկկը, Ի.Կանտը, Ֆ. Վոլտերը, Մ. Գոշը, Յու. Գալտունգը, Հ. Մարկուզեն, Թ. Համմարբերգը, Մ. Մչեղովը, Յու. Հաբերմասը, Ա. Ասմոլովը, և այլն:

Անձի հոգևոր զարգացման, արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրներին և հանդուրժողականության երևույթին հոգեբանական տեսանկյունից անդրադարձել են հայտնի հոգեբաններ Կ. Յունգը, Գ. Օլպորտը, Վ. Յադովը, Ղ. Ուզնաձեն, Մ. Ռոկիչը, Է. Ֆրոմը, Մ. Բախտինը, Մ. Ուլցերը, , Տ. Ադորնոն, Վ. Մյասիշչևը, Հ. Մարկուզեն, Ջ. Բյուչենտալը, Է. Արոնսոնը, Տ. Ուիլսոնը, Ռ. Էյկերտը և այլք:

Մի շարք առաջադեմ մանկավարժական տեսությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձի արժեհամակարգի և նրա սոցիալական դիրքորոշումների մարդասիրական զարգացման ուղին կրթության ժողովրդավարացումն է, անձի բազմակողմանի և ներդաշնակ հոգևոր զարգացումը՝ նրան համամարդկային արժեքներին, մշակութային ժառանգությանը և ժողովուրդների պահպանողյաններին հաղորդակից դարձնելով (Ջ. Դյուի, Թ. Համմարբերգ, Դ. Սելբի, Գ. Փայք, Հ. Գինո, Յ. Գալտունգ, Ա. Ասմոլով, Գ. Սոլդատովա, Տ. Ջագորույա, Վ. Սոնին, Լ. Միտինա, Յու. Շերբինա, Լ. Շարովա, Յու. Յանտովսկայա, Վ. Ջոլտուխին և այլ), :

Միջազգային ժողովրդավարական փորձը <<հանդուրժողականություն>> հասկացության ամրագրման և իրականացման հարցում ամփոփվել է <<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում>> (ՄԱԿ, 1948թ), Մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերում: Հասկացությունը առավել ամբողջական և ընդգրկուն մեկնաբանությամբ լուսաբանվել է <<Հանդուրժողականության սկզբունքների մասին հռչակագրում>> (ՅՈՒՆԵՍԿՕ, 1995թ.):

Զնայած այն բանին, որ այսօր հանդուրժողականության ձևավորման խնդիրն արժարժված է մի շարք մանկավարժական և հոգեբանական տեսություններում՝ արժեհամակարգի ձևավորման, քաղաքացիական դաստիարակության, ժողովրդավարական սկզբունքների դաստիարակության համատեքստում, այնուամենայնիվ այն դեռևս անհրաժեշտ լուծում չի ստացել կրթության ոլորտում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ. հիմնախնդրի պատմության, ժամանակակից դպրոցում դրա առկա վիճակի և առանձնահատկությունների ուսումնասիրման արդյունքների հիման վրա հանրակրթական դպրոցի աշակերտների հանդուրժողականության դաստիարակության արդյունավետ համակարգ մշակելն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ. հանրակրթական դպրոցի աշակերտների հանդուրժողականության ձևավորման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ. հանդուրժողականության դաստիարակության բովանդակության, ձևերի և միջոցների համակարգն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ. Հանրակրթական դպրոցի աշակերտների հանդուրժողականության դաստիարակությունն արդյունավետ կլինի, եթե.

1. վերհանվեն և օգտագործվեն հայ և արևմտյան մանկավարժների հանդուրժողականության մասին գաղափարները,
2. հանդուրժողականության և անհանդուրժողականության ժամանակակից ընկալումների վերլուծության և հանդուրժողականության հոգեբանական հիմքերի բացահայտման հիման վրա մշակվի հանդուրժողականության դաստիարակության արդյունավետ համակարգ,
3. դպրոցը դառնա ժողովրդավար հասարակության մոդել, իսկ ուսուցիչները հանդես բերեն ակտիվ մանկավարժական հանդուրժողականություն,

4. հստակեցվեն հանդուրժողականության դաստիարակության բովանդակությունը, իրականացման ձևերը, միջոցներն ու մեթոդները, մշակվեն չափորոշիչները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական հետազոտությունների ուսումնասիրման հիման վրա վերլուծել հանդուրժողականության ձևավորմանը և դաստիարակությանը վերաբերող գաղափարները արևմտյան և հայ մանկավարժության մեջ:
2. Բացահայտել հանդուրժողականության ժամանակակից ընկալումներն ու առանձնահատկությունները և վերհանել այդ ուղղությամբ ժողովրդավար հասարակության ներկայացրած պահանջները կրթական համակարգին:
3. Բնութագրել հանդուրժողականության ձևավորման հոգեբանական հիմքերը:
4. Վերլուծել կրթական համակարգում հանդուրժողականության դաստիարակության առկա խոչընդոտները և բնութագրել հանդուրժողականության դաստիարակության մանկավարժական պայմանները:
5. Մշակել ուսումնական և արտադասարանական աշխատանքում հանդուրժողականության դաստիարակության գործընթացն ապահովող ժամանակակից արդյունավետ համակարգ:
6. Սահմանել <<ուսուցչի հանդուրժողականություն>> և <<աշակերտի հանդուրժողականություն>> հասկացությունները:
7. Հիմնավորել հանդուրժողականության՝ որպես ուսուցչի մասնագիտական վարպետության հիմնական բաղադրիչ լինելու գաղափարը:
8. Սոցիոլոգիական հարցումների, ախտորոշիչ թեստերի միջոցով բացահայտել աշակերտների, ուսուցիչների հանդուրժողականության ցուցիչների փոփոխությունները և հաստատել մշակված տեխնոլոգիաների արդյունավետությունը հանդուրժողականության ձևավորման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են դիալեկտիկական, արժեբանական, մարդաբանական, մարդասիրական, տեսության և պրակտիկայի փոխկապվածության, համակարգային մոտեցումներն ու սկզբունքները:

Հետազոտության հիմքում ընկած են փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական այն գաղափարները, որոնք վերաբերում են կրթության հումանացմանը, (Է. Ռոտտերդամցի, Ֆ. Կոլտեր, Չ. Լոկկ, Է. Կանտ, Ա. Բիսե, Ռ. Շտայներ, Յ. Կորչակ, Ս. Ֆրենե, Ջ. Ռոդարի, Խ. Աբովյան, Ռաֆֆի, Հ. Հինդյան և այլք), հանդուրժողականության մանկավարժության գաղափարները (Թ. Համմարբերգ, Հ. Գինո, Յ. Գալտունգ, Շ. Ամոնաշվիլի, Ա. Ասմոլով, Լ. Միտինա, Տ. Ջագորուլյա, Վ. Սոնին, Յու. Շերբինա, Լ. Շարովա, Յու. Յանտովսկայա, Վ. Ջոլտուլսին և այլք), մի շարք հոգեբանների անձի գարգացման, անձնային աճի,

անձի հոգևոր զարգացման, արժեհամակարգի և մարդասիրական դիրքորոշումների ձևավորմանը վերաբերող տեսություններ (Գ. Օլպորտ, Վ. Յադով, Դ. Ուզնաձե, Կ. Յունգ, Մ. Ռոկիչ, Է. Ֆրոմ, Մ. Բախտին, Մ. Ուոլցեր, , Տ. Ադորնո, , Հ. Մարկուզե, Զ. Բյուջենտալ, Է. Արոնսոն, Տ. Ուիլսոն, Ռ. Էյկերտ, Վ. Մյասիշչև), ժամանակակից միջազգային և ազգային իրավական փաստաթղթերը (մարդու և երեխայի իրավունքների պաշտպանությանը վերաբերող), համամարդկային արժեքների, մշակութային ժառանգության և ժողովուրդների ավանդույթների հանդեպ հարգանքի և խաղաղ գոյատևման գաղափարները (Թ. Համմարբերգ, Հ. Գինո, Յ. Գալտունգ, Ա. Ասմոլով, Յու. Հաբերմասը, Մ. Ուոլցեր, Լ. Տոլստոյ, Ժ. Դերիդա), ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները՝ փոխներգործուն, համագործակցային, քննադատական մտածողության և այլ մեթոդներ (Դ. Սելբի, Գ. Փայք, Հ. Գինո, Գ. Սոլդատովա, Լ. Շայգերովա, Օ. Շարովա և այլք):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

Մեր առջև դրված խնդիրների իրականացման համար օգտագործվել են.

- փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականության համեմատական վերլուծության, համադրման, ընդհանրացման մեթոդները,
- դիտման, վերլուծության, զրույցի, հարցազրույցի, ախտորոշիչ և ստուգիչ թեստավորման, անկետավորման, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները:

Հետազոտություններն անցկացվել են երեք փուլով՝ 1999-2006, 2006-2008, 2008-2012թթ.:

1-ին փուլում (1999թ-2006թ) կատարվել են գրականության ուսումնասիրության և համապատասխան նյութերի հավաքման աշխատանքները: Ուսուցիչների և աշակերտների շրջանում անցկացվել են սոցիալոգումներ:

2-րդ փուլում (2006թ.-2008թ.) կատարվել են ատենախոսության բովանդակության հստակեցման և պլանավորման աշխատանքները: Մշակվել է <<Հանդուրժողականության ուսուցում>> տարրական դպրոցի դասվարի ձեռնարկը: Անցկացվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և ուսուցիչների շրջանում սոցիալոգումներ, ախտորոշիչ հետազոտական աշխատանքներ:

3-րդ փուլում (2008թ.-2012թ.) կատարվել են ատենախոսության շարադրման, հարցաշարերի, թեստերի վերլուծության աշխատանքները: Մշակվել է ավագ դպրոցի համար նախատեսված <<Արժանապատվություն և հանդուրժողականություն>> դասղեկական ժամերի համար նախատեսված ձեռնարկը: Անցկացվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ուսուցիչների և աշակերտների շրջանում սոցիալոգումներ, ախտորոշիչ թեստեր: Գրվել են հոդվածներ:

- Հետազոտության բազա են հանդիսացել հանրապետության 84 դպրոցներ՝ Երևան քաղաքի և մարզերի: Հետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել 258 մանկավարժ, 1630 աշակերտ և 20 մեթոդիստ՝ ԿԱԻ մասնաճյուղերից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

1. Վեր են հանվել հանդուրժողականության դաստիարակության մասին հայ և արևմտյան մանկավարժների այն գաղափարները, որոնք կարող են օգտակար լինել ժամանակակից դպրոցին:

2. Բացահայտվել է «Սասունցի Դավիթ» էպոսի հանդուրժողականության դաստիարակության ներուժը՝ որպես ազգային ինքնագիտակցության և ազգային դաստիարակության առանցք:

3. Մշակվել են սովորողների հանդուրժողականության դաստիարակության չափորոշիչները:

4. Սահմանվել են «ուսուցչի հանդուրժողականություն» և «աշակերտի հանդուրժողականություն» հասկացությունները:

5. Մշակվել և առաջարկվել է հանդուրժողականության դաստիարակության ձևերի ու միջոցների համակարգ, որն իրականացվում է ուսումնական և արտադասարանական գործընթացներում:

6. Բնութագրվել են հանրակրթական դպրոցում հանդուրժողականության արդյունավետ դաստիարակություն ապահովող մանկավարժական պայմանները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեսականորեն հիմնավորվել են հանդուրժողականության դաստիարակության անհրաժեշտությունը, հստակեցվել է բովանդակությունը, գործընթացի ուղղությունները և մանկավարժական պայմանները: Բնութագրված է հանդուրժողականության գաղափարների զարգացման ուղին հասարակական գիտակցության և մանկավարժության պատմության մեջ, մշակված են հանդուրժողականության դաստիարակության չափորոշիչները, բովանդակությունը, որոնք ենթադրում են, որ հետազոտության արդյունքները կարող են.

➤ օգտագործվել «Մանկավարժության պատմություն», «Ընդհանուր մանակավարժություն», «Բուհական մանկավարժություն» առարկաների դասավանդման գործընթացում՝ որպես լրացուցիչ գրականություն.

➤ օգնել ուսուցիչներին և դասախոսներին ուսումնական և արտադասարանային արտալսարանային աշխատանքների ժամանակ իրականացնելու սովորողների հանդուրժողականության դաստիարակությունը,

➤ մեթոդական օգնություն լինել դպրոցի տնօրեններին, դաստիարակության գծով փոխտնօրեններին, ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող անձանց՝ ուսուցիչների և աշակերտների շրջանում հանդուրժողական վերաբերմունք և վարքագիծ ձևավորելու գործում,

- օգնել ուսուցիչների և աշակերտների շրջանում ձևավորել հանդուրժողականություն՝ ներանձնային, միջանձնային, միջխմբային և միջազգային փոխհարաբերությունների մակարդակով,
- մանկավարժական կադրերի, դասղեկների պատրաստման և վերապատրաստման դասընթացների համար մշակված և փորձարկված նյութերը, (մոդուլներ, ձեռնարկներ) կարող են օգտակար լինել ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող անձանց համար:

Մշակված և օգտագործված ախտորոշիչ հարցաշարերը, ուսումնադաստիարակչական մեթոդները կարող են.

- օգտագործվել ուսուցիչների վերապատրաստման և դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացներում,
- գործնական օգնություն հանդիսանալ սույն հիմնախնդրով զբաղվողներին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅՑՆԵՐԸ

1. Հայ և արևմտյան մանկավարժների հանդուրժողականության վերաբերյալ գաղափարների և մոտեցումների ներդրումը ժամանակակից դպրոցական պրակտիկայում էականորեն նպաստում է աշակերտների հանդուրժողականության դաստիարակությանը ինչպես՝ ուսումնական, այնպես էլ արտադասարանական աշխատանքների գործընթացում:

2. Հանդուրժողականության և անհանդուրժողականության ժամանակակից ընկալումների բացահայտումը, հանդուրժողականության ձևավորման հոգեբանական հիմքերի և կրթական համակարգում առկա խոչընդոտների վերհանումն ու բնութագրումը թույլ են տալիս սահմանել այդ ուղղությամբ հասարակության սոցիալական պատվերը կրթական համակարգին:

3. Հանդուրժողականության դաստիարակությունը համակարգված, նպատակաուղղված և ուղղորդված գործընթաց է, որը կրթական համակարգի մասնագետներից պահանջում է մասնագիտական կարողությունների և անձնային որակների զարգացում, ընկալումների և գաղափարների վերաարժևորում, կարծրատիպերի և նախապաշարմունքների հաղթահարում, դաստիարակության գործընթացում մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառում և մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտների համագործակցություն:

4. Ուսուցիչների և աշակերտների հանդուրժողականության ցուցիչներ են հանդիսանում հարգանքը ուրիշի ազատության, իրավունքների, կարծիքների հանդեպ, ագրեսիայի բացակայությունը ուրիշների հանդեպ, ապրումակցման հմտությունները, սեփական մշակույթի արժևորման միջոցով այլ մշակույթների արժևորումը, համարժեք ինքնագնահատականը, քննադատական և վերլուծական մտածողության առկայությունը, ինքնաճանաչման, ինքնագնահատման և ինքնադրսևորման կարողություններն ու հմտությունները:

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում է դաստիարակության ոլորտում փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գիտությունների արդի նվաճումների վերլուծությամբ, փորձարկվողների լայն ընդգրկվածությամբ, հետազոտության տևական և համակարգված բնույթով, հարցումների արդյունքների վիճակագրական վերլուծությամբ և մաթեմատիկական մշակմամբ, ատենախոսի անձնական մասնակցությամբ և ներդրմամբ:

- Հետազոտության հիմնական տեսական դրույթները և արդյունքները քննարկվել են միջազգային, հանրապետական կոնֆերանսներում, հոդվածներում, ամփոփված են «Կյանքի հմտություններ» 1-7-րդ դասարանների ձեռնարկներում, «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչներում, դասագրքերում, «Հանդուրժողականության դաստիարակություն» տարրական դպրոցի դասվարի և «Արժանապատվություն և հանդուրժողականություն» ավագ դպրոցի դասղեկի ձեռնարկներում:

- Աշխատանքն ամբողջությամբ ներկայացվել և քննարկվել է Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 02.07.2012թ. նիստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (134 աղբյուր) և հավելվածից (7), աշխատանքում ընդգրկված են գծանկար (1), աղյուսակ (5), գրաֆիկ (5) :

Ներածության մեջ հիմնավորվել է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, հետազոտություն մեթոդները, օբյեկտն ու առարկան, տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Հանդուրժողականության գաղափարախոսության ծագման և զարգացման պատմատեսական հիմքերը»** բաղկացած է երեք ենթագլխից: **1-ին ենթագլխում՝ «Հանդուրժողականության գաղափարախոսության ծագումն ու զարգացումը արևմտյան փիլիսոփայության և մանկավարժության մեջ»** վերլուծված են տարբեր ժամանակաշրջանների նշանավոր փիլիսոփաների և մանկավարժների հանդուրժողականության գաղափարների զարգացման պատմությունը, միտումները և նշանակությունը մանկավարժության հումանացման և ժողովրդավարացման գործում:

Մարդասիրության, միմյանց հանդեպ հանդուրժողականության, բարեկրթության, գթասրտության գաղափարների դաստիարակության խնդիրը ծագել է դեռ վաղ ժամանակներից և արտացոլվել է անտիկ փիլիսոփաների և մանկավարժների աշխատություններում: Տարբեր ժամանակներում և հասարակարգերում այդ

խնդիրները տարբեր կերպ են արտահայտվել և լուծվել: Ենթազվյալում վերհանվել և ներկայացվել են հումանիստ մանկավարժներից Է. Ռոտտերդամցու, Ջ. Լոկկի, Ֆ. Վոլտերի, Ի. Կանտի, Ռ. Շտայների, Ա. Բինեի, Յ. Կորչակի, Ջ. Դյուրի, Ս. Ֆրենեի, Ջ. Ռոդարիի և այլոց հանդուրժողական գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում մանկավարժության նոր ճյուղի՝ հանդուրժողականության մանկավարժության ծնավորման:

Երկրորդ՝ <<Հանդուրժողականության գաղափարները հայ մանկավարժության մեջ>> **ենթազվյալում** ներկայացված են հանդուրժողականության գաղափարները հայ իրավական մտքի, փիլիսոփայության և մանկավարժության մեջ (Ս. Գոշ, Ա. Շիրակացի, Դ Անհաղթ, Ղ. Աղայան, Խ, Աբովյան, Հ. Հինդյան, Ա. Բահաթրյան, Ղ. Ալիշան, Հ. Թումանյան և այլք): Ենթազվյալում վերհանվել են նաև հանդուրժողականության գաղափարները <<Սասունցի Դավիթ>> էպոսում՝ որպես ազգային գիտակցության և ազգային ինքնության կարևոր բաղադրիչ և բնութագրիչ:

Երրորդ ենթազվյալում դիտարկվում և լուսաբանվում են <<Հանդուրժողականության և անհանդուրժողականության ժամանակակից ընկալումները>>, վերլուծվել է հանդուրժողականության սկզբունքների հռչակագիրը: Համաձայն այդ ընկալումների <<Հանդուրժողականությունը նշանակում է մեզ շրջապատող աշխարհի մշակութային բազմազանության և մարդկային անհատականության արտահայտչաձևերի տարբերության ըմբռնում և ընդունում: Դրան նպաստում են գիտելիքները, լայնախոհությունը, շփումը, մտքի, համոզմունքների, խղճի ազատությունը: Հանդուրժողականությունը բազմազանության ներդաշնակությունն է:

Այն սոսկ բարոյական պարտք չէ, այլև քաղաքական և իրավական պահանջմունք: Հանդուրժողականությունն արժանիք է, որը հնարավոր է դարձնում խաղաղության ձեռքբերումը և նպաստում է ռազմական մշակույթը խաղաղության մշակույթով փոխարինելուն>>²: Հանդուրժողականության բարոյական իմաստն ամփոփվում է նրանում, որ հիմքում ընկած է ոչ թե համբերությունը՝ որպես անձնային որակ, այլ ուրիշի ազատությունների հանդեպ հարգանքը, այն գիտակցումը, որ ազատությունն այլ է, քան ամենաթողությունը, և, որ իր ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսի ազատությունը: Հանդուրժողականությունը ենթադրում է պատրաստակամություն՝ ուրիշներին ընդունելու այնպիսին, ինչպիսին որ կան, և նրանց հետ համաձայնության վրա հիմնված փոխհարաբերություններ: Հանդուրժողականությունը չպիտի վերածվի անտարբերության, հաշտվողականության կամ սեփական շահերի անտեսման: Այն

² ՑՈՒՆԵՄԿՕ-ի գլխավոր կոնֆերանսի քսանութերորդ նստաշրջան, <<Հռչակագիր հանդուրժողական սկզբունքների մասին>>, Փարիզ, 16 նոյեմբեր, 1995թ. էջ 8

առաջին հերթին ենթադրում է բոլորի կողմից հարգալից, փոխշահավետ, համագործակցային վերաբերմունք և փոխհարաբերություններ:

Երկրորդ գլուխը՝ «Հանդուրժողականության դաստիարակության առանձնահատկությունները» նույնպես բաղկացած է երեք ենթագլուխներից: **1-ին ենթագլխում՝** «Հանդուրժողականության ձևավորման հոգեբանական հիմքերը», հիմնվելով Գ. Օլպորտի անձի զարգացման տեսության, Վ. Յադովի դիսպոզիցիաների տեսության, Վ. Մյասիշչևի հարաբերությունների տեսության, Ղ. Ուզնաձեի անձի զարգացման տեսության և դիրքորոշումների հոգեբանության վրա հանդուրժողականությունը դիտարկվում է որպես անձնային որակ, որն արտահայտվում է ակտիվ բարոյական դիրքորոշմամբ, այլ մարդկանց հետ արդյունավետ փոխհարաբերություններ կառուցելու պատրաստականությամբ:

Հանդուրժողականությունը լինելով անձի բարոյական որակ ենթակա է խթանման, զարգացման, ինքնախթանման, ինքնադաստիարակման: Խնդրո առարկայի վերաբերյալ հոգեբանական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանդուրժողականության ձևավորումը որպես անձնային որակ՝ բազմագործոն և բազմաշերտ գործընթաց է, և պահանջում է անձի ձևավորման համար ներդաշնակ միջավայր և տևական, ուղղորդված դաստիարակչական ներգործություն (Վ. Յունգ, Մ. Ռոկիչ, Է. Ֆրոմ, Մ. Բախտին, Մ. Ուոլցեր, Տ. Ադորնո, Հ. Մարկուզե, Զ. Բյուչենտալ):

2-րդ ենթագլխում՝ «Հանդուրժողականության խթանման հնարավոր միջոցները կրթական համակարգում» առաջարկվել են հանդուրժողականության դաստիարակության մանկավարժական պայմանները և նկարագրվել են հանդուրժողականության ձևավորման հնարավոր խոչընդոտները կրթական համակարգում:

Վեր են հանվել կրթական ծրագրերում և նյութերում հանդուրժողականության ձևավորմանը նպաստող գործոնները, որոնք կարող են արտահայտվել հետևյալ սկզբունքներով. որքանով են կրթական ծրագրերը և ուսումնական նյութերն ապահովում՝

- համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակությունը,
- ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորումը,
- ուսումնական նյութերի համապատասխանությունը սովորողների հետաքրքրություններին, զարգացման և տարիքային առանձնահատկություններին:

Հստակեցվել են գնահատման այն **չափանիշները**, որոնցով առաջնորդվելով հնարավոր է որոշել, թե **կրթական ծրագրերն ու նյութերը որքանով են նպաստում հանդուրժողականության ձևավորմանը**.

1. Ուսումնական նյութերը պարունակու՞մ են արդյոք թեմաներ, տեքստեր, առաջադրանքներ, որոնք վերաբերում են մարդու և երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային կամ ազգային փաստաթղթերին:

2. Ուսումնական նյութերը նպաստում են արդյոք սովորողների կողմից այլ մարդկանց կարիքներն ու խնդիրները հասկանալուն, ապրումակցելուն:
3. Ուսումնադաստիարակչական գործընթացում կարևորվում է արդյոք սովորողի անձնական մասնակցությունը մարդու իրավունքների, արդարության, հանդուրժողականության վերաբերյալ հարցերի բարձրացման, քննարկման և խնդիրների լուծման հարցերում:
4. Ուսումնական նյութերում արդյոք ընդգրկված են տարբեր ժողովուրդների, պետությունների, մարդկանց մշակութային տարբերությունների, ավանդույթների և փոխհարաբերությունների մասին տեղեկություններ:
5. Ուսումնական նյութերում, նկարագարումներում հասարակության տարբեր խմբերի միջև ապահովված է արդյոք ներկայացուցչականությունն ու համամասնայնությունը (սեռային, ազգային, սոցիալական և այլն):
6. Ուսումնական նյութերը որքանով են գերծ կարծրատիպային ընկալումներից, խտրականություն սերմանող, կոնֆլիկտային արտահայտություններից:
7. Ուսումնական նյութերը որքանով են քննարկվող նյութերի շուրջ սովորողների անկախ կարծիքի ձևավորման ու արտահայտման հնարավորություն ընձեռում:

3-րդ ենթազխում՝ <<Հանդուրժողականությունը որպես ուսուցչի մասնագիտական վարպետության հիմնական բաղադրիչ>>, ընդգծվել է ուսուցչի դերը՝ որպես կրթական ներդաշնակ միջավայր ստեղծող պատասխանատու անձի, իսկ հանդուրժողականությունը որակվել է որպես ուսուցչի մասնագիտական վարպետության հիմնական բաղադրիչ: Ենթազխում հիմնվել ենք Ա. Հուգենբյուլ-Կրեյգի, Կ. Յունգի, Վ. Սոնինի, Յու. Շչերբինայի, Լ. Միտինայի, Յու. Յանտովսկայայի, Հ. Գինոյի, Է. Արոնսոնի, Տ. Ուիլսոնի, Ռ. Էյկերտի՝ ուսուցչի մասնագիտական և անձնային որակների և դաստիարակության գործընթացի փոխկախվածության վերաբերյալ գաղափարների վրա: Ըստ Կ. Յունգի՝ ուսումնական գործընթացում ուսուցչի անձնային որակներն ավելի կարևոր են, քանի որ կարող է գալ մի օր, երբ աշակերտը կկրկնի ոչ թե այն, ինչ իրեն սովորեցրել է ուսուցիչը, այլ կկրկնի հենց իրեն՝ ուսուցչին: Յուրաքանչյուր դաստիարակող մշտապես պետք է իրեն հարց տա. արդյո՞ք ինքն իր կյանքում, խղճո մտոք, իրեն այնպես է դրսևորում, ինչը փորձում է սովորեցնել իր աշակերտներին³:

³ Юнг К.Г., Конфликты детской души, Пер. с нем. - М.: Канон, 1997. - 336 с. - (История психологии в памятниках). Ст. 60-62

Ըստ Վ. Ա. Սոնինի ուսուցչի մասնագիտական մտածելակերպում և վարքագծում բարդ համակարգով միմյանց հետ փոխկապված են ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումներ: Դրական դրսևորումներից են ապրումակցումը և հանդուրժողականությունը, կողմնորոշումը համամարդկային արժեքներին, մասնագիտական վերլուծությունը, կանխատեսումը, երեխաների խնդիրների և իրավիճակների ընդգրկում տեսլականը: Բացասական դրսևորումներից են՝ խրատական կեցվածքը, բարձր ինքնագնահատականը, ինքնավստահությունը, քննադատական մտածողության նվազումը, հայացքների դոգմատիզմը, հաղորդակցական ճկունության բացակայությունը, մանկավարժական համառությունը, հասարակական հավանության արժանանալու ընդգծված մղումը, ցածր մոտիվացիան⁴: Ուստի շատ կարևոր է ուսուցիչների հետ աշխատանքում, վերապատրաստման դասընթացների ընթացքում վերհանել կարծրատիպային մտածողությունը, դիպուկ մատնանշել մեր հասարակության մեջ առկա մարտահրավերները, դրանց օրինակների վրա փորձել փոխել նրանց վերաբերմունքը խնդրին:

Երեխայի իրավունքների համաձայնագրի սկզբունքները կրթությամբ զբաղվողների վարքում պետք է արտահայտվեն անխտրական վերաբերմունքով, երեխայի առավելագույն շահի գիտակցմամբ, երեխայի զարգացման և երեխայի տեսակետների նկատմամբ հարգանքով: Այդ հարգանքը արժանապատիվ քաղաքացու ձևավորման ամենակարևոր բաղադրիչն է: Թերևս չկա մեկ այլ մասնագիտություն, քան ուսուցչինը, որ այդքան կարևոր լինի երեխաների իրավունքների գաղափարի իրականացման և իր երկրի և ողջ աշխարհի համար պատասխանատու քաղաքացու ձևավորման համար: Այս ենթագլխում սահմանվել է նաև <<հանդուրժող մանկավարժ>> հասկացությունը:

Երրորդ գլուխը՝ <<Հանդուրժողականության դաստիարակությունը հանրակրթական դպրոցում>> բաղկացած է չորս ենթագլուխներից: **1-ին ենթագլխում՝ <<Հանդուրժողականության դաստիարակության իրագործման ուղիները>>**, մշակված և ներկայացված են սովորողների հանդուրժողականության չափորոշիչները, սահմանված է <<հանդուրժող աշակերտ>> հասկացությունը:

Որպես հանդուրժողականության դաստիարակության իրագործման ուղիներ են նախանշված ընտանիքի և դպրոցի համագործակցությունը, մրցակցությունը համագործակցությամբ փոխարինելը, համապատասխան չափորոշիչները կրթական ծրագրերում ընդգրկելը, ուսումնադաստիարակչական բոլոր գործընթացներում դրանք կիրառելը, դաստիարակության մեթոդներն ու ձևերը վերջիններին համապատասխանեցնելը և դաստիարակչական ապահով միջավայր ստեղծելը: Հանդուրժողականության դաստիարակության

⁴ Сонин В.А. Психолого-педагогический анализ профессионального менталитета учителя// Мир психологии. 2000. - №2. - С. 183-191.

նպատակների իրագործման համար անհրաժեշտ է համարվել դպրոցի ժողովրդավարացման գործընթացը խթանելը, մարդու և երեխայի իրավունքների ուսուցումը, սոցիալական հմտությունների ձևավորումը և մանկավարժական նոր տեխնոլոգիաների ներմուծումը:

2-րդ ենթազխում՝ <<Հանդուրժողականության դաստիարակությունն ուսումնական գործընթացում>>, ներկայացված են հանրակրթական դպրոցներում գործող տարբեր առարկայական ծրագրերում հանդուրժողականության բովանդակության ինտեգրման ուղղությունները և ներուժը, նշելով հանդերձ, որ տարբեր առարկաների ուսումնական գործընթացներում այն ինտեգրելը բավական բարդ, տևական, ծախսատար, հետևողական գործունեություն է:

Հանդուրժողականության դաստիարակությունն ուղղորդված և հետևողական իրականացնելու առավել արագ և արդյունավետ միջոց է առանձին առարկայի կամ դասընթացի բովանդակության մեջ այն ինտեգրելը: Այդպիսին հանդիսացավ <<Կյանքի հմտություններ>> առարկան, որի բովանդակությունը հանդուրժողականության դաստիարակություն իրականացնելու առումով սպառիչ բովանդակային դաշտ ապահովեց: Այս ենթազխում ներկայացված են նաև <<Կյանքի հմտություններ>>, <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաների դասերի օրինակներ, որոնք իրենց բովանդակությամբ մեծ հնարավորություն են ընձեռում հանդուրժողականության դաստիարակության առումով:

3-րդ ենթազխում՝ <<Հանդուրժողականության դաստիարակությունը արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործընթացում>>, ներկայացված են տարրական դպրոցի դասվարների դասվարական ժամերն անցկացնելու համար ինտերակտիվ վարժություններ, արտադասարանական աշխատանքների կազմակերպման ձևեր, միջոցներ, մեթոդներ: Մասնավորապես՝ համագործակցային աշխատանքի, զրույցի, բանավեճի, դերային խաղերի, խմբային հետազոտությունների, պրոբլեմային իրավիճակների վերլուծությունների և շնորհանդեսների մեթոդները:

4-րդ ենթազխում՝ <<Սոցիոլոգիական հարցումների և ակտորոշիչ թեստերի արդյունքների վերլուծություն>>, բերված են կատարած ուսումնասիրությունների, հարցումների, թեստերի վերլուծությունների արդյունքները, գրաֆիկները:

Ներդրված դասընթացների և արտադասարանական աշխատանքների մոնիտորինգի՝ դասալուծումների, հարցաշարերի, հարցազրույցների, զրույցների, կլոր սեղանների, քննարկումների, սոցհարցումների, թեստավորման արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը հանգեցրել են այն եզրակացության, որ հանրակրթական դպրոցներում ներդրված և փորձարկված չափորոշիչները, ծրագրերը, ուսուցչի ձեռնարկները և դասագրքերը, օգտագործված ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները նպաստել են ուսուցիչների և աշակերտների մոտ հանդուրժողականություն անձնային որակի ցուցիչների

բարելավմանը, աշակերտակենտրոն, բարեհաճ և հանդուրժողական մթնոլորտի ձևավորմանը:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության արդյունքները և երաշխավորությունները, նախանշված են խնդրի հետագա ուսումնասիրությունների հեռանկարները: Հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հանդուրժողականության գաղափարները պահանջված են եղել բոլոր ժամանակներում, առավել ևս այսօր, որովհետև համաշխարհայնացման և գլոբալ տեղաշարժերի հետևանքով սերտացել են տարբեր մշակույթների շփումները: Այդ գաղափարները որպես ուսումնասիրման առարկա իրենց մեկնաբանություններն են ստացել բոլոր ժամանակների փիլիսոփայության և մանկավարժության մեջ:

2. Հանդուրժողականության գաղափարների անհրաժեշտության գիտակցումը, ներդրումն ու կիրառումը ժամանակակից դպրոցական պրակտիկայում նպաստում է աշակերտների և ուսուցիչների արդյունավետ հաղորդակցմանը, համագործակցությանը, այլոց իրավունքների և կարծիքների հանդեպ հարգանքի ձևավորմանը, կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանը, ապրումակցմանը, կարծրատիպերի և նախապաշարմունքների հաղթահարմանը, խաղաղության մշակույթի ամրագրմանը, որոնք շատ կարևոր են այսօր՝ համաշխարհայնացման, գլոբալ տեղաշարժերի, էկոլոգիական և բնական աղետների, բռնության և տեռորի առկայության պայմաններում և դրանց հետևանքների վերացման համար:

3. Հանդուրժողականությունը տարբեր դրսևորումներ ունի. անձնական, հասարակական՝ որոնք արտացոլվում են բարոյականության, բարքերի, հասարակական հոգեբանության և գիտակցության մեջ, պետական՝ որն ամփոփվում է օրենսդրության և քաղաքական գործունեության մեջ:

4. Հանդուրժողականությունը և համբերությունը շատ հաճախ շփոթում են, մինչդեռ դրանք տարբեր որակներ են: Հանդուրժողականությունը համալիր անձնային որակ է, դիրքորոշումների և վարքագծերի միասնություն, բարոյական արժեք, ներանձնային, միջանձնային, միջխմբային, միջազգային հաղորդակցման և արդյունավետ շփման գործիք և միջոց: Այն իր մեջ ներառում է բարեհոգություն, հարգալից երկխոսության պատրաստակամություն, համագործակցելու հակվածություն, որը խաղաղության մշակույթ ստեղծելու պայման է: Հանդուրժող անձը ուրիշների հետ խաղաղ է գոյակցում, և իրեն հարմարավետ է զգում հասարակության բազմազանության մեջ, մինչդեռ համբերող անձը ներքին կոնֆլիկտ ունի և համբերում է ու հարմարվում նույնիսկ իր համար սոհաճ պայմաններին, իրավիճակին: Համբերելու որակը ներքին ազդեսիա, դժգոհություն և անհարմարավետություն է ենթադրում:

5. Հանդուրժողականության՝ որպես համալիր որակի (ինքնաճանաչման, ինքնագնահատման, օբյեկտիվ ինքնարժևորման, արդյունավետ շփման,

կոնֆլիկտային իրավիճակները հաղթահարելու, բանակցելու, ուրիշի ազատությունների հարգման, գաղափարների ու որոշումների ընտրության իրավունքի գիտակցման, համագործակցելու, իրերն ու երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու և վերլուծելու կարողության, ապրումակցման, պատասխանատվության, սխալներն ընդունելու կարողության, ներելու, քաղաքացիական ակտիվության և այլն) ձևավորումը կարելի է ձևակերպել որպես ժողովրդավար հասարակության՝ կրթական համակարգին ներկայացրած պահանջ, պատվեր: Այդ պատվերը ենթադրում է նաև անհանդուրժող վերաբերմունքի ձևավորում ստի, կեղծիքի, բռնության, կոռուպցիայի, խտրականության և օրենքի անտեսման հանդեպ:

6. Անձի հանդուրժողականության նախապայման և հիմք է հանդիսանում անձի ընդունող, հանդուրժող վերաբերմունքն ինքն իր հանդեպ, որը կարող է ձևավորվել ինքնաձանձաձան, ինքնագնահատման, ինքնաբացահայտման հմտությունների և կարողությունների զարգացման պարագայում:

7. Հանդուրժողականությունը մարդու՝ իր սեփական դիրքորոշումների և որոշակի հարաբերությունների կառուցման գիտակցված, իմաստավորված և պատասխանատու ընտրությունն է:

8. Դպրոցում առկա իրավիճակի վերլուծությունը թույլ է տվել բացահայտել կրթական համակարգում հանդուրժողականության դաստիարակության գործընթացում առկա հետևյալ խոչընդոտները.

- դպրոցի ղեկավարման ոչ ժողովրդավար գործելակերպը,
- ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավված անձանց անհանդուրժող, կոնֆլիկտային փոխհարաբերությունները,
- ուսուցման և դաստիարակության ավտորիտար եղանակները և մեթոդները,
- ընտանեկան դաստիարակության, ավանդույթների և արժեհամակարգի տարբերությունները,
- ուսուցիչների գենդերային աններդաշնակությունը,
- ուսումնական ծրագրերում, դասագրքերում անհավասարություն, խտրականություն, անհանդուրժողականություն խրախուսող գաղափարների առկայությունը:

9. Հետազոտության ընթացքում մշակված և փորձարկված չափորոշիչները, ծրագրերը, ուսուցչի, դասվարի և դասղեկի ձեռնարկները, դասագրքերը, օգտագործված մանկավարժական տեխնոլոգիաները նպաստում են հանդուրժողականության դաստիարակությանը ինչպես ուսումնական, այնպես էլ արտադասարանական աշխատանքների գործընթացում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Դավթյան Մ., Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Վերոյան Ա., Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ դաստիարակության գծով փոխտնօրենների և դասղեկների համար, ԿԳՆ ԿԱԻ, Երևան 2007, 140 էջ:
2. Թորոսյան Ն., Ալեքսանյան Լ., Մնացկանյան Ն., Հանդուրժողականության ուսուցում, դասղեկի ձեռնարկ, <<Ասողիկ>>, Երևան 2008, 140 էջ:
3. Ալեքսանյան Լ., <<Հանդուրժողականության գաղափարների ծագումն ու զարգացումը. պատմական անդրադարձ հայ մանկավարժությանը>>, <<Մանկավարժություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 2, 2010թ:
4. Թովուզյան Ա., Ալեքսանյան Լ., <<Հանդուրժողականության գաղափարախոսության ծագումն ու զարգացումը արևմտյան փիլիսոփայության և մանկավարժության մեջ>>, <<Մանկավարժություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 3, 2012թ, էջ 30-43:
5. Ալեքսանյան Լ., <<Հանդուրժողականության դաստիարակության չափորոշիչները և իրագործման ուղիները ուսումնադաստիարակչական գործընթացում>>, <<Մանկավարժություն>> գիտամեթոդ. վերլուծ. ամսագիր, N 5, 2012թ, էջ 24-31
6. Ալեքսանյան Լ., <<Հանդուրժողականության ձևավորման հնարավոր խոչընդոտները հանրակրթական դպրոցում>>, <<Մանկավարժական միտք>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր 12, 2012 1-2, էջ 72-77

АЛЕКСАНИЯ ЛУСИНЕ ФРУНЗЕЕВНА
ВОСПИТАНИЕ ТОЛЕРАНТНОСТИ У УЧЕНИКОВ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЫ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 30-го ноября, 2012г., в 14.00 на заседании специализированного совета 065 по Педагогике ВАК при Ереванском государственном университете по адресу : 0025, Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. События и процессы, происходящие процессы в современном, постоянно меняющемся мире распространяются с большой скоростью. Современная социокультурная ситуация характеризуется демократическими преобразованиями, крахом режимов тоталитаризма, позитивными изменениями в международной политике. Однако, несмотря на все эти положительные процессы, человечество каждый день сталкивается с такими опасностями, как нарушение прав и свобод человека, международный экстремизм, терроризм, обострение ксенофобии, национально-этнические и религиозные конфликты, насилие и войны. Страхи, неуверенность, бедность, политические и экономические кризисы, состояние окружающей среды и экологические проблемы стали нашими повседневными заботами. Кроме того, процессы интеграции, глобализации приводят к росту интенсивности соприкосновения различных государств и культур. Неотложность решения этих проблем выдвинула на первый план в качестве императива необходимость сохранения целостности и многообразия современного мира. Толерантность, терпимость и уважение ко всему "инаковому" в этой ситуации – условие выживания человечества, а в более широком контексте – всего живого на планете. Формирование установок толерантного сознания выступает и как условие развития современного общества, и как социальный заказ системе образования. Все это актуализирует проблему воспитания толерантности в общеобразовательных школах.

Цель исследования: Разработка эффективной системы воспитания толерантности учащихся общеобразовательной школы.

Основные задачи исследования

1. Выявить и проанализировать идеи толерантности в философской, педагогической и психологической научной литературе.

2. Уточнить современные восприятия и особенности толерантности, выявить социальные потребности в системе образования по этой проблеме.
3. Определить психологические основы формирования толерантности.
4. Проанализировать существующие препятствия в системе образования и охарактеризовать педагогические условия по воспитанию толерантности.
5. Разработать современную эффективную систему воспитания толерантности в учебном процессе и во время внеклассных работ.
6. Определить понятия “толерантный учитель” и “толерантный ученик”.
7. Обосновать толерантность, как основной компонент профессионального мастерства учителя.
8. С помощью социологических опросов, диагностических тестов определить параметры уровня толерантности учителей и учеников, определить эффективность внедрения модели воспитания толерантности.

Научная новизна исследования

1. Выявлены идеи толерантности в западной и отечественной педагогике.
2. Раскрыт потенциал воспитания толерантности, как основа национального самосознания и национального воспитания в эпосе “Давид Сасунский”.
3. Определены критерии сформированности толерантности учащихся.
4. Определены понятия “толерантный учитель” и “толерантный ученик”.
5. Разработан и предложен комплекс педагогических мер по формированию толерантности в учебном и внеурочном процессе.
6. Охарактеризованы педагогические условия в общеобразовательных школах для эффективного воспитания толерантности.

Практическая и теоретическая значимость исследования

Теоретически обоснована необходимость воспитания толерантности, определены содержание, направления и педагогические условия. Выявлены и охарактеризованы основные этапы развития идей толерантности в общественном сознании и в истории педагогики. Разработаны критерии воспитания толерантности у учащихся, содержание и педагогические меры, в связи с чем можно считать, что результаты исследования:

- можно использовать в учебных курсах “История педагогики”, “Общая педагогика” в качестве дополнительной литературы,
- помогут учителям и преподавателям в учебном процессе и во внеурочной работе осуществлять воспитание толерантности,
- могут использоваться как методический материал директорами школ, завучами по воспитательной работе, учителями, специалистами по

переподготовке учителей – по формированию толерантного сознания и поведения учителей и учащихся.

➤ Разработанные и апробированные материалы (модули и методические пособия) для переподготовки педагогов и классных руководителей могут использоваться специалистами по переподготовке учителей.

Разработанные опросники, тесты и используемые учебно-воспитательные технологии и новаторские меры:

➤ могут использоваться во время переподготовки учителей и в учебно-воспитательных работах,

➤ помогут специалистам в этой области.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы (134 источника), приложений (7), чертежей (1), таблиц (5), графиков (5). По темам диссертации изданы 2 пособия для учителей и учеников, опубликованы 4 статьи.

Апробация результатов исследования

Основные положения результатов исследования обсуждались на международных и республиканских конференциях, семинарах, в статьях, изложены в пособиях для учителей предмета “Навыки жизни” 1-7 классы, в стандартах и учебниках 2-4 классов “Я и окружающий мир”, в пособии “Воспитание толерантности” для учителей начальных классов и в пособии “Достоинство и толерантность” для учителей старших классов.

LUSINE FRUNZE ALEKSANYAN

TOLERANCE EDUCATION FOR PUBLIC SCHOOL STUDENTS

Dissertation submitted to obtain the degree of Candidate of Pedagogical Sciences, speciality 13.00.01- “Theory and History of Pedogogy”.

Defense of the dissertation will take place on November 30, 2012, at 14.00 at the Yerevan State University at the meeting of the Scientific Degree-Awarding Council Specialized in pedagogy 065 of the Higher Attestation Commission of the Republic of Armenia (Adress: 0025, Yerevan, Abovyan 52a str.)

SUMMARY

The actual value of the research

In our modern ever-changing world events have a domino effect able to bring about economic, demographic and cultural changes worldwide. The social-cultural atmosphere is characterized by democratic changes, the fall of dictatorships and a tendency towards positive changes in international policies. Nevertheless parallel to the above said changes, humankind daily faces actual threats to human rights and

freedoms, such as extremism, escalation of xenophobia, international terrorism, violence, and armed conflicts on grounds of ethnic or religious differences.

The intensity of these problems brings forth an acute need for protection of the integrity and diversity of the modern world.

On the other hand integration processes towards globalization lead to an active interaction of different cultures. Due to population migration many countries become multi-cultural, where their harmonious development is only possible in an atmosphere of equality, respect of human rights and cultural differences.

In such a state of affairs Tolerance becomes essential for the survival of humankind and of the planet.

Objectives of the research: to develop an effective system of tolerance education for public school students based on the study of the history of the issue and of the general situation and specifics at schools.

Main tasks of the research:

1. Based on the study of philosophical, pedagogical and psychological literature, to analyze the concepts in Western and Armenian pedagogy supporting the significance of tolerance education and development.

2. To bring to light the present-day perceptions and characteristics of tolerance, reveal the requirements in this relation that a democratic society presents to the educational system.

3. To outline the psychological grounds for the development of tolerance.

4. To analyze obstacles to tolerance education in the educational system and outline the pedagogical conditions for its effective education.

5. To develop an effective and up-to-date system for tolerance development in curricular and extracurricular activities.

6. To define the concepts of “teacher tolerance” and “student tolerance.”

7. To substantiate the concept that tolerance is an essential constituent of a teacher’s professional activity.

8. To reveal through sociological questionnaires and diagnostic tests the changes in the tolerance indicators among teachers and students, as well as to prove the effectiveness of the developed technologies in the process of tolerance development.

The scientific novelty of the research

1. Ideas of Western and Armenian pedagogues on tolerance education that can prove useful for modern schools have been brought to light.

2. The potential of tolerance education of the Armenian epic poem “David of Sassoun” has been revealed as a pivot of national consciousness and national identity.

3. Standards for tolerance education of students have been developed.
4. The concepts of “teacher tolerance” and “student tolerance” have been defined.
5. A set of measures and ways for tolerance education has been developed and suggested, and is presently implemented in curricular and extra-curricular educational activities.
6. Pedagogical conditions in public schools fostering an effective tolerance education have been defined.

The practical and theoretical value of the research

The necessity of tolerance education has been theoretically confirmed; the content, routes and pedagogical conditions required for tolerance education have been determined. Analysis of the development of the notion of tolerance in the society consciousness and in history of pedagogics has been made; standards and content for tolerance education have been developed, and they indicate that the results of the research can:

- Be effectively used in the subjects “History of Pedagogics” and “General Pedagogics”, as complementary literature,
- Assist school teachers and university professors in their educational and extracurricular activities in tolerance education,
- Be of methodical assistance to school principals, assistant principals, professionals engaged in teacher training activities, for the promotion of attitudes and behaviors of tolerance in teachers and students,
- The developed and approved materials (modules, handbooks) for teacher training courses can be of use for specialists engaged in teacher training activities.

The structure of research: the thesis consists of an introduction, three chapters, a conclusion, an annotated bibliography (134 sources) and annexes (7); it includes 5 tables, 5 diagrams and a drawing. The main themes of the dissertation served for publishing 2 manuals for teachers and students. 4 articles were published.

The approbation of research results

- The main theses of the research and its results have been discussed in international and national conferences, various articles, teachers’ seminars; they are included in the standards for the “Life Skills” subject for grades 1-7; the standards for the subject “The World around me, and Myself” for elementary school, and the textbooks; in the Tolerance Education manuals for elementary and high school teachers.

